ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2023 թվականի N ՑՊ-019-06/23

ք. Երևան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Թողարկող) 2023 թվականի մայիսի 31-ի հայտը ՝ 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5,0% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2023 թվականի հունիսի 13-ին ներկայացված եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 12-րդ գլխով սահմանված պահանջներին, և ղեկավարվելով Օպերատորի Կանոնների 15-րդ գլխի 70 կետի 1-ին ենթակետով, և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.52) կետի ե) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5,0% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMACBAB2BER5 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, շնորհել ACBABB հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 19-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**